ԱՐԶՆԻ ՔԱՌԱԲՍԻԴ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ

Վ. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայկական վաղ միջնադարի այս հուշարձանը գտնվում է Կոտայքի շրջանի (այժմ Արովյան) Արզնի գյուղի հյուսիս-արևմտյան կողմում, ձորամերձ սարահարթի վրա ընկած փոքր գերեզմանոցում, որն այժմ կառուցապատման հետևանքով գրեթե անհետացել է։

Հայ պատմիչների մոտ այս հուշարձանի մասին հիշատակություն չկա։ Հ. Շահխաթունյանցը[1], Ղ. Ալիշանը[2], Հ. Էփրիկյանը[3] իրենց աշխատություններում նշում են նրա տեղը և սրբատաշ քարից կառուցված լինելը։ Մ. Սըմբատյանցը նույնպես նկարագրում է հուշարձանի տեղը և ավելացնում, որ փոքրիկ խաչաձև հուշարձանը «չուներ ամենևին գրուածք»[4]։

«Ակնարկ հայ ճարտարապետության»[5] գրքում տպագրվել է միայն նրա հատակագիծը։ Հուշարձանի մասնագիտական քննության փորձը կատարվում է առաջին անգամ։

Ուսումնասիրությունից պարզվում է, որ այն երկու անգամ վերանորոգվել է։ Առաջին անգամ հենախորշերի, գուցե և գմբեթի կղմինդրե ծածկերը փոխարինվել են քարով։ Սա, հավանաբար, կատարվել է X—XI դդ., երբ տարածված էր կղմինդրե ծածկերը քարով փոխարինելու պրակտիկան։ Երկրորդ անգամ այն վերանորոգել է 1955 թ. Հայկական ՍՍՀ հուշարձանների պահպանության կոմիտեն։ Վերանորոգման ժամանակ բացվել է կիսով չափ հողի մեջ թաղված հուշարձանը և վերականգնվել ճակատների ավերված երեսապատումը։ Հենախորշերի ու գմբեթի ավերված տանիքը փոխարինվել է թիթեղյա ծածկով։ Ներսից այն համեմատաբար լավ է պահպանվել և ոչ մի փոփոխության ու վերանորոգման չի ենթարկվել։

Ճարտարապետական այդ հորինվածքի հիմքը՝ կենտրոնական քառակուսին, չորս կողմից շրջապատված է գմբեթարդներով ավարտված կիսաշրջանաձև հենախորշերով։ Անցումը կենտրոնական քառակուսուց դեպի ութանիստ թմբուկ՝ լուծված է միակտուր քարի մեջ փորված չորս փոքր տրոմպների, իսկ թմբուկից գմբեթ՝ երկրորդ շարքի ութ ավելի փոքր տրոմպների միջոցով։ Առաջին շարքի տրոմպները հենվում են գմբեթակիր, թեթևակիորեն պայտաձև կամարների վրա, որոնք իրենց հերթին հանգչում են գմբեթատակ քառակուսու (2,32×2,32 մ) պարզ անկյուններին։

---

1 Հ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Այրարատայ, հ. 2, Էջմիածին, 1842, էջ 164։

2 Ղ. Ալիշան, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց տեղագրեաց, Վենետիկ, ս. Ղազար, 1890, էջ 289։

3 Հ. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, ս. Ղազար, 1903—1905, էջ 300։

4 Մ. Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, Վաղարշապատ, 1895, էջ 230։

5 Ակնարկ հայ ճարտարապետության, Երևան, 1964, էջ 142։



Նկ. 1 Հուշարձանի արևելյան ճակատի տեսքը մինչև վերակառուցումը

Նկ. 2 Հուշարձանի տեսքը վերակառուցումից հետո

Հենախորշերը՝ բացառությամբ արևմտյանի, ուր տեղավորված է միակ դուռը, ունեն միակտուր քարի մեջ փորված դեպի ներս լայնացող կլոր լուսամուտներ, որոնք իրենց վերին մասով ագուցված են գմբեթարդի շարվածքին։ Նույն ձևի լուսամուտներ կան նաև թմբուկի արևելյան և արևմտյան նիստերի վրա, այն տարբերությամբ միայն, որ սրանք ունեն համեմատաբար փոքր չափեր և դեպի ներս չեն լայնանում։ Հուշարձանի դռան ուղղանկյուն լայնացվածքը արտաքինից ունի հորիզոնական բարավոր, իսկ ներսից՝ կիսաշրջանաձև կամար։ Դուռը հատակից բարձր է 40 սմ։

Ներքին քառաբսիդ հորինվածքը արտաքինից պարփակված է ութանիստ ծավալով, որը բարձրանում է քիվով ավարտվող քառակուսի (5,60×5,60 մ) պատվանդանի վրա՝ կառուցված մեկ շարք բարձրությամբ մաքուր տաշված քարերից։ Պատվանդանի քիվը մեզ հասել է բավական վնասված՝ որոշ քարեր, մեծ մասամբ հարավային ճակատում, սրբատաշ չեն և չունեն պրոֆիլ։ Քիվի արևմտյան ճակատի դռան աջ կողմի երկու քարերը ունեն պրոֆիլի այլ համաչափություններ։

Հուշարձանը կառուցված է կանոնավոր շարքերով տեղական մաբդագույտուֆից տաշված քարից։ Պատի շարվածքի հորիզոնական կարանները ունեն 45° եզրակոսներ։ Բոլոր ճակատները զերծ են հարդարանքներից, եթե չհաշվենք թմբուկի շրջանաձև լուսամուտներին տրված սլսրզ պրոֆիլը։

1955 թ. վերակառուցման աշխատանքների ժամանակ, ինչպես նկատեցինք վերը, տեղադրվել և նորից շարվել են երեսապատման բոլոր ընկած քարերը։ Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ հինգերորդ շարքը ավելորդ է շարված։ Պահպանված շարքերի բարձրությունը 74, 62, 61, 62 սմ է։ Այս չափերի դեպքում հինգերորդ շարքը չէր կարող քառասունհինգ սմ լինել։ Եթե ընդունենք անգամ շարքի այդպիսի բարձրությունը, որին պիտի գումարվի նաև քիվը (առնվազն 30 սմ), առանց որի հնարավոր չէ պատկերացնել այս հուշարձանը, ապա գմբեթարդի ծածկը գրեթե հորիզոնական կստացվեր։

Ուրեմն, ինչպես արված է մեր վերակառուցման նախագծում, քիվը պետք է դրվեր հենց չորրորդ շարքի վրա։ Այդ դեպքում գմբեթարդի ծածկը կունենա 22—25° թեքություն, որը շատ բնորոշ է մեր վաղ շրջանի հուշարձաններին։

Հուշարձանի քիվը չորրորդ շարքի վրա տեղադրելիս լուսամուտի քարը իր ելուստով ագուցվում է քիվի մեջ։ Սա տարակուսանք առաջացնել չի կարող, քանի որ ինտերյերի լուսամուտի քարը ևս նույն ձևով ագուցված է գմբեթարդի շարվածքում։

Հուշարձանի հիմնական ծավալի ու թմբուկի քիվի քարերից և ոչ մեկը մեզ չեն հասել։ Այդ պատճառով վերակառուցման մեր նախագծում, որպես քիվ օգտագործել ենք հուշարձանի պատվանդանի արևմտյան ճակատի աջակողմյան այն երկու քարերը, որոնք, ինչպես նշեցինք, ունեն այլ պրոֆիլ։

Մեր կարծիքով, դրանք հուշարձանի հիմնական ծավալի քիվի այն քարերն են, որոնցով առաջին վերակառուցման ժամանակ լրացվել են պատվանդանի քիվի ընկած քարերը։ Այս ենթադրությունը հաստատվում է այն փաստով, որ քիվի կիսագլանիկից ներքև գտնվող ուղիղ մասը իր չափով հավասար է լուսամուտի քարի ելուստին։ Սրանից հետևում է, որ հուշարձանը պետք է ունենա չորս շարք և քիվի տեղադրումը անպայման պետք է կատարվեր չորրորդ շարքի վրա։ Մինչդեռ շարվել է հինգ շարք, սբբ և ամբողջությամբ խախտել է







Հուշարձանի արևմտյան ճակատը (վերակառուցման նախագիծ), կտրվածքը, հատակագիծը։

հուշարձանի համաչափությունները։ Դրան նպաստել է նաև տեղադրված թիթեղյա ծածկը։

Կարևոր է նշել նաև, որ պատվանդանի քիվը իր պրոֆիլով հիշեցնում է Տեկորի արևմտյան դռան[6] և Քասաղի բազիլիկայի արևելյան աբսիդի[7] ճակատների պրոֆիլները։

Հուշարձանի 1955 թ. վերանորոգման ժամանակ արված մասնակի պեղումներից հայտնաբերվել են կղմինդրի բեկորներ, որոնք նման են Աշտարակի Կարմրավոր եկեղեցու ծածկի կղմինդրներին։ Սրա հիման վրա գմբեթարդի և գմբեթի ծածկերի համար վերակառուցման նախագծում օգտագործել ենք կղմինդր։ Պեղումների ժամանակ հայտնաբերվել են նաև կլոր քարի բեկորներ, որոնց վրա քանդակված է շրջանի մեջ ներգծված հավասարաթև խաչ։ Քարի տրամագիծը հավասար է հուշարձանի լուսամուտների արտաքին տրամագծին։ Կարելի է ենթադրել, որ այն տեղադրված է եղել արևմտյան ճակատի դռան վերևի մասում։

Հուշարձանի հիմնական ծավալը կառուցված է մեծ ճշտությամբ։ Սակայն նույնը չի կարելի ասել գմբեթի մասին։ Առաջին շարքի տրոմպների տարբեր չափերի (80, 73, 69, 87 սմ) հետևանքով թմբուկի մնացած չորս նիստերն անհավասար են ստացվել (135, 133, 114, 118 սմ)։ Անհավասար են նաև թմբուկի արտաքին նիստերը, որի պատճառով թմբուկը նկատելիորեն շեղված է. այլ կերպ ասած, ութանիստ հուշարձանի և ութանիստ թմբուկի համապատասխան նիստերը միմյանց զուգահեռ չեն։ Հուշարձանի հիմնական ծավալի կառուցման մեջ վարպետը ցուցաբերել է մեծ հմտություն, իսկ գմբեթի իրականացման գործում թույլ է տվել զգալի անճշտություններ, որոնք, թերևս, վկայում են գմբեթաշինության մեջ նրա անփորձության մասին։ Հետաքրքիր է նշել, որ թմբուկի պատերը բավական հաստ են (70—80 սմ) և արտաքինից շարված է ոչ թե կանոնավոր շարքերով, ինչպես հուշարձանի հիմնական ծավալում, այլ քարերը հագցված են մեկը մյուսի մեջ։ Տրոմպները հենված են գմբեթարդի կամարներին, որի հետևանքով գմբեթի ծանրությունը անհավասար է փոխանցվում նրանց։ VI—VII դդ. խաչաձև փոքր գմբեթավոր մեզ հասած բոլոր հուշարձաններում տրոմպները դրված են կամարները պարփակող քառակուսու վրա։ Բացառություն է միայն Բջնիի ս. Սարգիս հուշարձանը, որի փոքր չափերը հնարավորություն են տվել անտեսել հակասեյսմիկ պահանջները և տրոմպները տեղադրել կամարների վրա։

Արղնիի հուշարձանի գմբեթատակ քառակուսին, ինչպես նշվեց, ունի պարզ անկյուններ՝ առանց լրացուցիչ ելուստների։ Հետագա շինություններում այս ձևը զարգացավ և պարզ անկյուններին տրվեց լրացուցիչ պրոֆիլ՝ ուղղանկյուն կամ կլոր կիսասյուների նման։

Գմբեթատակ քառակուսու պարզ անկյունների և թմբուկի պատերի հաստության հետևանքով թմբուկը լայն է ստացվել, իսկ բարձրությունը՝ բավական ցածր, լայնության մեկ երրորդ մասից էլ պակաս։ Թմբուկի բարձրության նման հարաբերությունը բնորոշ չէ վաղ միջնադարից մեզ հայտնի հուշարձաններին։

---

6 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1940, նկ. 23։

7 Ա. Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955, նկ. 39։

Արդնիի հուշարձանի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ պատի շարվածքի ձևն է։ Պատի ամենանեղ հատվածում կրաբետոնի շերտը նրա հաստության մոտ մեկ վեցերորդ մասն է կազմում։ Շարվածքի նման ձևը հատուկ է Հայաստանի IV—V դդ. հուշարձաններին, որովհետև արդեն VI—VII դդ. կրաբետոնի հաստությունը հասնում էր մինչև մեկ երրորդի[5]։

Արդնիի հուշարձանի ծավալա-տարածական հորինվածքին միանգամայն համապատասխան է լուսամուտների կլոր ձևը։ Բացվածքների փոքր չափերի հետևանքով լուսամուտներին ուղղանկյուն ձև տալ հնարավոր չէր, որովհետև այն կխախտեր այս դողտրիկ հուշարձանի ճակատների համաչափությունները։ Այս առումով նույնպես Արդնիի հուշարձանը եղակի է հայ ճարտարապետության VI—VII դդ. մեղ հասած փոքր խաչաձև գմբեթավոր հուշարձանների շարքում։

Արտաքինից ութանկյան ձևով կառուցված հուշարձանները վաղ ծագում ունեն։ Նման լուծումների մենք հանդիպում ենք հռոմեական վաղ քրիստոնեության շրջանի հուշարձաններում՝ Դիոկղետիանոսի դամբարանը (284—305 թթ.) Սպալատայում, ս. Սիրստայի դամբարանը (IV դ.) Միլանում։ Թե՛ հռոմեական և թե՛ քրիստոնեական աշխարհի մյուս երկրներում ութանիստ հատակագծի այս ձևը կիրառվում էր միայն փոքր չափի հուշարձաններում։ Այդ պայմանավորված էր մի շարք հանգամանքներով, որոնցից մեկն այն է, որ մեծ չափի հուշարձաններում գմբեթատակ քառակուսու անկյունների մոտ պատերը բավական հաստ էին ստացվում։

Ութանկյուն հատակագիծը վաղ շրջանի հայ ճարտարապետության մեջ այլևս չօգտագործվեց։ Մեղ հասած փոքր գմբեթավոր քառաբսիդ հուշարձաններում հանդիպում ենք հատակագծային այլ լուծումների։ Ծովինարում, օրինակ, հենախորշերը արտաքինից կրկնում են ներքին հորինվածքը, Աղարակում ըստ ամենայնի են բազմանիստ, Մանկանոցում և Փարպիում ուղղանկյուն եղրանկարիսկ Սառնաղբյուրում արտաքին պատերը ոչ թե ուղղահայաց են միմյանց, այլ կազմում են բութ անկյուններ։

Ութանիստ հատակագծի չենք հանդիպում նաև հետագա շրջանում։ Բացառություն է XIII դ. կառուցված Մակարավանքի Աստվածածին եռաբսիդ եկեղեցին, որը հիմնականում կրկնելով Արդնիի կառույցի ընդհանուր հորինվածքը կրում է դարաշրջանի ճարտարապետական մտքի կնիքը։

Ի տարբերություն VI—VII դդ. հուշարձանների, որոնցում նկատելի է արևելյան խորանը ընդգծելու ձգտումը (սովորաբար արվում էր ավելի մեծ), այս հուշարձանի արևելյան խորանը հավասար է մյուսներին։

Վաղ միջնադարից մեղ հասած հայկական բոլոր հուշարձանները, որպես կանոն, բարձրանում են բազմաստիճան որմնախարիսխների վրա։ Արդնիի հուշարձանը ունի քիվով ավարտվող քառակուսի պատվանդան, որը, սակայն, իսկական պատվանդանի դեր չի կատարում։ Պատվանդանը ընդհանրապես ծառայում է իրրև հարթակ, որի վրա բարձրանում է հուշարձանը և ունի կոնստրուկտիվ նշանակություն։ Մինչդեռ Արդնիի հուշարձանի պատվանդանատիպ լուծումը ոչ մի կոնստրուկտիվ նշանակություն չունի, և դիտք է ենթադրել, որ դա հելլենոսական շրջանից եկող ավանդույթի արտահայտություն է։ Եթե ըն-

[5] О. Халпахчьян. Архитектура Армении. Всеобщая история архитектуры, т. 3. Л.—М., 1966, стр. 201.

դունենք, որ մեզ հետաքրքրող հուշարձանը ոչ թե եկեղեցի է, այլ վկայարան, ապա նրա ճարտարապետական հորինվածքի հիմքը, թերևս, փնտրենք քրիստոնեական վաղ շրջանի մեմորիալ կառուցվածքներում կամ նրանց արձագանքները հանդիսացող միջնադարյան նման կառույցներում։

Դրանում համոզվելու համար կարելի է հիշատակել Օձունի և Աղուդիի հուշարձանները։ «Դժվար չէ տեսնել,— գրում է Ս. Մնացականյանը,— որ երկու հուշարձաններն էլ մշակված են՝ նկատի ունենալով երկու միմյանցից խիստ տարբեր մասերի առկայությունը— ներքին մասի վրա, որը կարծես թե կազմում է հուշարձանի առաջին հարկը, և որը փաստորեն կատարում է պատվանդանի դեր, բարձրանում է կառուցվածքի վերին, այսպես ասած, երկրորդ հարկը մարմնավորող մասը»[9]։

Նույն հորինվածքը կրկնում է նաև Արզնիի հուշարձանը, որտեղ, սակայն, պատվանդանի դեր կատարող մասը ունի անհամեմատ ավելի փոքր բարձրություն։ Իսկ ինտերյերում՝ այսպես կոչված առաջին և երկրորդ հարկերը միաձույլ են. այսինքն՝ հուշարձանի երկու մասերն էլ ներսից ունեն հատակագծի նույն ձևը։ Քառակուսի պատվանդանի (վրա ութանիստ ծավալը տեղադրելու դեպքում պատվանդանի անկյուններում առաջանում են եռանկյունաձև մակերեսներ։ Բացառված չէ, որ դրանք արվել են քանդակազարդ հուշաքարեր տեղադրելու համար։ Պատվանդանի նման լուծումը եզակի է մեզ հասած բոլոր հուշարձաններում։ Իսկ եթե ավելի ուշ շրջանում հանդիպում ենք համանման լուծումների, ապա սրանք կամ կլոր են, կամ կրկնում են հուշարձանի արտաքին կոնֆիգուրացիան։

Այսպիսով, իր հատակագծային ներքին լուծմամբ, Արզնիի հուշարձանը պատկանում է հայկական վաղ միջնադարի քառաբսիդ հուշարձանների խմբին։ Մեծադիր, մաքուր տաշված քարերի կանոնավոր շարքերը, եզրակոսները, կամարների թեթևակի պայտաձևությունը, տրոմպային անցումների սիստեմը, առանձին մանրամասների նմանությունները վաղ շրջանի հուշարձանների հետ, հիմք են տալիս եզրակացնելու, որ այն կառուցվել է VI դ. առաջին կեսում։ Սա հաստատվում է նաև VI—VII դդ. փոքր գմբեթավոր կառույցների և Արզնիի կառույցի համեմատական վերլուծությամբ։ VI—VII դդ. ճարտարապետական կառույցների բնորոշ գծերն ունենալով հանդերձ, Արզնիի հուշարձանը արժեքավոր է նաև այն եզակի առանձնահատկություններով (հատակագծի ութանկյուն եզրանկար, ուղղանկյուն պատվանդան, կլոր լուսամուտներ, ցածրադիր թմբուկ), որոնք չեն հանդիպում այդ դարերին պատկանող մեզ հասած հուշարձաններում։

ЧЕТЫРЕХКОНХОВЫЙ ПАМЯТНИК АРЗНИ

В. Г. ГРИГОРЯН

Резюме

Памятник Арзни принадлежит к группе четырехконховых сооружений раннего средневековья. С помощью сравнительного анализа памятников IV—VII вв. и сооружений Арзни удалось доказать, что памятник построен в первой половине VI в.

[9] Ս. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 180։